

ՀԱՅ—ԲՈՇԱՆԵՐ ^{*)}

(Ազգագրական ուսումնասիրութիւն)

I.

ՊԵՏՄԵԿԱՆ ԵՒ ԱՅԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ԾԱԳՈՒՄՆ.

Թէև լեզուով և սովորութիւններով հայ բոշաները տարբեր են երևում եւրոպական, այլ և ասիական միւս ազգերի մէջ թափառող ցիգաններից, սակայն քիչ աւելի ուշադրութեամբ զննելուն պէս, իսկոյն կարելի է գտնել բարքերի, մարդաբանական և նոյն իսկ լեզուի մեծ նմանութիւններ: Եղած տարբերութիւնները վերագրելու է շրջապատող այն ազգերի ազդեցութեանը, որոնց շրջանում հայ բոշաները դարերից ի վեր կեանք են վարել և որոնցից մէկի կրօնն ընդունելով, իւրացրել են նոր սովորութիւններ և ժամանակի ընթացքում աղճատել իրենց ազգային լեզուն:

Ինչպէս ներածութեան մէջ ասել ենք, լեզուաբանական ու մարդաբանական հետազօտութիւնները եւրոպացի պատմագէտներին հասցրել են այն եզրակացութեան, որ ցիգանների հայրենիքը եղել է Հնդկաստանը և որ նրանք ծագում են առել հնդկական մի ստորին՝ ջաթ կոչուող ցեղից:

Ենթարկուելով արշաւանքների, այլ և սովոր միշտ թափառական կեանք վարելու ^{**)} , ենթադրում են, որ Վրիս-

*) Տես «Ազգագր. Հանդէս», գիրք Գ.

**) Եւրոպական մի հեղինակ անձամբ ստուգելով հաստատում է, որ աժմ իսկ, հնդկական ջաթ ցեղը թափառական, վրանաքնակ է և որ նրանց բարքերը լիովին նման են ցիգանների բարքերին: (Տես այդ մասին Lespinasse, «Les bohémiens du pays Basque» հր. 16).

տոսի 1000 թուին նրանք թողնում են Հնդկաստանը և երկու մեծ ճիւղերով մտնում են Ասիա *): Առաջին ճիւղը իջնում է Ինդոս գետի հոսանքն ի վար, Պարսից ծոցի փերով անցնում Արաբիա, Եգիպտոս և հաստատւում այդ կողմերում: Աւելի ուշ, նրանցից զատւում է մի ստուար մաս և տարածւում դէպի Փոքր-Ասիա: Երկրորդ մեծ ճիւղը Հնդկաստանի վերի կողմերից մտնում է Պարսկաստան, այնտեղ երկար ժամանակ կեանք վարում, յետոյ, զանազան հանգամանքներից ստիպուած մի մասը թողնում է այնտեղ, իսկ միւս մասով անցնում է Միջագետք, Փոքր-Ասիա և այնտեղ խառնւում Եգիպտոսից եկածների հետ: Դրանից յետոյ, ցիգանները խառն ի խուռն և ընդմիջական գաղթականութիւններով մուտք են գործում Եւրոպա:

Այդ հանդիպումներով է բացատրւում Փոքր-Ասիայի և Բալկանեան թերակղզու մէջ գտնուող ցիգանական ստուար ազգաբնակութեան, այլև տարբեր ցեղերի գոյութիւնը, որոնք զանազան միջավայրերի ազդեցութեան ենթարկուած լինելով, ստացել են զանազան՝ միմեանցից տարբերուող բարքեր: Այդ ցեղերից երկուսը Փոքր-Ասիայում ստացել են շինգէնէ և հայ-քոչա անունները: Չինգէնէները մահմեդականութիւն են ընդունել **), իսկ հայ-քոչաները մտած լինելով հայերի մէջ՝ քրիստոնեայ են դարձել և հետզհետէ ենթարկուել հայկական բարքերի ազդեցութեանը:

Բայց թէ հայ բոշաները և թէ բոլոր միւս ցիգաններից շատ ցեղեր նախօրօք երկար աւրել են Պարսկաստանում. դա երևում է պարսկական լեզուի արած ազդեցութիւնից՝ ընդհանուր ցիգանների լեզուի վրայ թէ Եւրոպա-

*) Այս թիւը ենթադրական է, սակայն շատ պատմաբաններ նոյն ենթադրութիւնն են անում. միջանիւսները միայն ուզում են հաստատել, որ ցիգանների գաղթականութիւնը եղել է Քրիստոսից շատ առաջ:

**) Չինգէնէները Փոքր-Ասիա մտնելուց առաջ Եգիպտոսումն էին ընդունել մահմեդականութիւնը: Նրանց մէջ իսկ կան մի մեծ ցից աչքի խփելու չափ տարբերուող ցեղեր:

յում և թէ Հայաստանում: Եւրոպական ցիգանների լեզուն նոյն քանակութեամբ կրում է պարսկական լեզուի ազդեցութիւնը, որքան Հայ-բոշայի լեզուն. բացի դրանից, եւրոպական պատմագիրները երկար ժամանակ չէին կարողանում որոշել և երբեմն ցիգանների հայրենիքը Եգիպտոսն էին համարում, երբեմն Պարսկաստանը *): Այդ վարանումը ծընում էր նրանից, որ ցիգանները իրենք Եգիպտոսը համարում էին հայրենիք, մինչ լեզուն ականերև կերպով խօսում էր յօգուտ Պարսկաստանի **):

Յամենայն դէպս, հայ-բոշաների մէջ մնացել են դեռ սւլանդութիւններ և շատ ծերունիներ պատմում են՝ լսած լինելով իրենց պապերից, թէ նրանք եկել են Պարսկաստանից. չնայելով որ միւս կողմից էլ պնդում են, որ Պարսկաստանը չէ եղել իրենց հայրենիքը ***):

Բայց Պարսկաստանը ո՛չ մի ցիգանի հայրենիք չէ եղել. Ֆիրդուսին իսկ, իր «Շահնամէ» գրքում մի լեգենդայով ցոյց է տալիս, որ ցիգանները տեղացիներ չեն և որ նրանք եկել են Հնդկաստանից:

«Բահրամ թագաւորը — պատմում է նա — ունենալով հարստութիւն և երջանկութիւն, կամեցաւ ունենալ լաւ երաժիշտներ: Դրա համար նա դիմեց հնդկական Կանոշ թագաւորին և սա Պարսկաստան ուղարկեց 10,000 երաժիշտ: Բահրամը աշխատեց տեղաւորել նրանց, հող, տուն ու տեղ տալ, բայց եկողները վարժ թափառելու, մի տարի իսկ չկարողացան հաստատուն կեանք վարել և իսկոյն ցրուեցին դէպի ամէն կողմ: Թագաւորը չկորցնելու համար նրանց, թոյլ

*) Lespinasse. «Les bohémiens du pays Basque» եր. 15 — 16:

**) Նոյն տեղը:

***) Պասպատին (Etudes dur les Tchinghanés եր. 17) ասում է, որ Թիւրքիայի չինգէնէները իրենց հայրենիքը Եգիպտոսն են համարում և Ն. վ. Սարգսեանը (Տեղագրութիւն 'ի փոքր և 'ի մեծ Հայս, եր. 81 — 82) չինգէնէներին կոչում է «խառնիճաղանճ եգիպտական աղգի» և հայ-բոշաների համար ասում, որ շատ նման են նրանց:

տուաւ որ այդպէս կեանք վարեն: Եւ ահա այդ օրուանից է, որ նրանք թափառում են, ոչ մի տեղ չեն հաստատուում և գիշեր ու ցերեկ գողութեամբ զբաղւում»: Այդ ժողովրդին Ֆիրզուսին կոչում է լուրիներ: Պարսկաստանում ցիգաններին կոչում են լուրի^{*)}, մըթըրը^{**)}, կարաշի:

Ոչ միայն այս լեզենդան, այլ և լեզուական ու մարդաբանական հետազոտութիւնները միահամուռ պնդում են, որ ցիգանների, նրանց հետ և հալ-բոշաների հայրենիքը ոչ Պարսկաստանն է եղել և ոչ Եգիպտոսը, այլ Հնդկաստանը: Հալ-բոշան տարբերում է միւս ցիգաններից — ինգէնէներից, մթըրըներից և այլն այն չափով, ինչ չափով որ ժամանակը և միջավայրը ազդել է նրանց լեզուի և բարքերի վրայ: Իսկ նմանութիւնները շատ աւելի են, քան տարբերութիւնները: Բոշա անունը հայերն են միայն տուել նրանց: Պա անշուշտ մի նախատական բառ է, երևի ծագած «բռն» (գատարկապօրտ, թափառող) բառից: Այդ անունը նոր է, ներկայ դարիս մէջ ստեղծած. հայ գրականութեան մէջ ցիգանները միշտ կոչուել են զնչու: Եւ բոլորում նրանք ունեցել են ընդհանրապէս *ցինգեան, զինգան, ցիգան* կոչումները. լետով միայն, նայելով թէ ցիգանները զանազան երկրներում ինչ արհեստներով են զբաղուել, կոչուել են այդ արհեստների անունով: Շօտլանդիայում նրանց կոչել են Tinkler կամ Tinker, որ նշանակում է *կլայելիող*. լոյների մէջ՝ *կացիրեւոր* (մանրավաճառ զինագործ), սլարսիկները՝ ըստ նիւթօլդի՝ առաջ կոչելիս են եղել *զինգեսար* (թամբագործ), որովհետև նրանք առաջ թամբագործութեամբ էին զբաղուելիս եղել. իսկ այժմ կոչում են խիրրաւ-րէնդ (մտ-

*) Լուրի բառը ալոպէս է բացատրում 1826-ի մի սլարսիկերէն բառարան (Վեորդ Տէր-Յովհաննիսեանի) «Գեղեցիկքն գրոհին դարչի (կարաշի) կոչեցելու, որք 'ի պահու ուրախութեան և զուարճութեան հնչեն բերանովք իւրեանց լուլու. և լայն սակս կոչեցան լուրի կամ լուլի և լոգնակի լուլիան»:

**) Մըթըրը արաբերէն բառ է և նշանակում է ուրախացնող (տես նոյն բառարան):

դադործ), որովհետև Պարսկաստանում էլ կան ցիգանների ցեղեր, որոնք հայերի նման՝ մաղազործութեամբ են զբաղւում:

Այդպէս էլ եղել է Հայաստանում: Սկզբում նրանց երևի կոչելիս են եղել զնշու, լետոյ «մաղազործ»: Իրենք բոշաները՝ իրենց «մաղազործ» են անուանում և հայ նոր գրականութեան մէջ էլ նրանց այդպէս են կոչում: Ժողովուրդն է միայն, որ սկզբից ի վեր խորշելով, ծաղրելով և արհամարհելով հայ բոշային, կնքել է նրան զանազան ածականներով՝ բոշա, աներես, թափառական, մուրացկան և այլն:

Իրենք հայ-բոշաները իրենց կոչում են լում (ազատ մարդ), որպէս եւրոպացի ցիգանները՝ ըօմ և պարսիկ ցիգանները՝ դօմ: Երբեմն իրենց անուանում են «մամուլ» (մարդ): Եւրոպացի հեղինակները հաստատում են, որ եւրոպական գնչուներն էլ իրենք իրենց լաճախ «մամուլ» անունն էին տալիս, բայց այժմ աւելի ըօմ բառն են գործածում տղամարդ գնչուի համար, ըոմսի — կին գնչու, ըոմա — լոգնակի, ըոմանօ — գնչուական (իբր ածական) և ըոմսիշէլ — ցիգանական ազգ: Հայ-բոշաները կորցնելով իրենց լեզուի քերականութիւնը, երբ ուզում են ասել գնչուական ազգ՝ ասում են լոմավտիք (իք վերջաւորութիւնը փոխ առած հայերէնից):

Բոշաների մասին հայերը ասում են, որ Կայէնի ցեղից են և այդ կարծիքը անշուշտ բղխել է նրանից, որ գնչուները միշտ թափառական կեանք են վարում: Չէ՞ որ Աստուած անիծեց Կայէնին միշտ թափառելու և բոշան էլ միշտ թափառում է *): Իրենք հայ-բոշաները իրենց ծագման մասին պատմում են այսպիսի լեգէնդաներ:

Եղել է մի ինչ-որ Գրիգոր Ակրականտացի եպիսկոպոս: Սափիոս քահանան և Կիլիսիկիւտոս սարկաւազը 12 խորհրդակիցներով կամենում են խայտառակել եպիսկոպոսին. գի-

*) Եւրոպ. ցիգանները պատմում են, որ նրանք անիծուած են միշտ թափառելու իրենց նախնիքների ալն մեղքի համար, որ նրանք հրաժարուեցին Յովսէփին, Մարիամին և մանուկ Յիսուսին ապաստան տալ, երբ սրանք փախչում են Հերովդէսից. (ПАТКАНОВЪ «Цыганы» стр. 2):

շերով մի կին բերում և թագցնում են նրա մահճակալի տակ և առաւօտ շուտով գալիս երեւան են հանում: Եպիսկոպոսը անուանարկուած, անիծում է իրեն դաւողներին: 12 մարդկանց մի-մի երեսները սեանում է, կնոջ բերանը որթնոտում և ծռում: Այնուհետև սեպածները իսկույն փախչում են քաղաքից դուրս և բնակւում անտառների մէջ: Ոչ մի ընտանի կենդանի չի հետեւում նրանց, միայն էշն է, որ իր լիմարութեամբ, անէծք-բան չէ հասկանում և հետեւում է նրանց, դրա համար էլ միայն էշն է նրանց ընկեր ու սիրելի անասունը: Անիծուածները այնուհետև սկսում են միշտ քաղաքներից և բնակութիւններից հեռու ապրել, կողովներ ու մաղեր են շինում և որովհետև իրենք ամաչում են ծախելու գնալ, կանանց են միայն ուղարկում առևտրի: Բաւական ժամանակ լետոյ, եպիսկոպոսը, տեսնելով անիծեալների զղջումը, ներում է նրանց միայն պայմանով, որ քրիստոնեայ եկեղեցին նրանցից կրօնաւոր չձեռնադրի: Բոշաները սկսում են կամաց-կամաց բնակութիւնների մէջ մտնել այգալիսով *):

Այս լեգենդան հանուած է «Վարք սրբոց»-ից, յարմարացնելով այնտեղ յիշատակուած «անիծուած սեպածների» զրոյցին: Յայսմաւուրքի մէջ փնտռելով, կարողացանք գտնել զրոյցի աղբիւրը: Գրիգոր Ակրականդացին եղել է Սիցիլիայի Ակրականտա քաղաքի հովիւը: Քաղաքի երկու կուսակցութիւնների պարագլուխները — Սաբինոս քահանան և Կրեսկինդոս սարկաւազը, որոնք երկուսն էլ կամեցել են առաջնորդ լինել, բոշաների պատմածի նման դաւադրութիւն են սարքում՝ եպիսկոպոսին անուանարկելու: Ամբաստանողները, 100 անձ, քահանայի և սարկաւազի առաջնորդութեամբ պապի հրամանով կայացրած դատի առաջ են ելնում, բայց դատարանում եպիսկոպոսը անէծք է թափում ամբաստանողների վրայ, որից լետոյ բոլորի կէս դէմքը սեանում է:

*) Այս լեգենդան պատմել են ինձ մի. քանի բոշաներ, Պ. Ե. Նալալեանը նույնպէս լսել է միևնույն լեգենդան Ախալքալաքի բոշաներից (տես «Աղգ. Հանդէս» գիրք ա. եր. 178):

Այն ժամանակ պատը աւելացնում է անէծքը՝ ասելով. «Արդ հրամայեմք ձեզ և որդոց ձերոց ազգէ մինչև յազգ, որք իցեն այդմ նշանօքդ՝ որ այլ ոչ լիցի քահանայ կամ սարկաւազ և կամ այլ ինչ յաստիճանաւորաց եկեղեցւոյ և եթէ ևս յանդգնեսցին, նզովեալք եղիցին ի Քրիստոսէ...»:

Պատմելով այդ գրուցը, Վարք Սրբոցը աւելացնում է, թէ «Նշանն որ եղև ՚ի դէմսն չարախօսացն, յազգէ նոցա ոչ ջնջեցաւ, այլ է մինչև ցայսօր»։ (Յայսմաւուրք, Տրէ ամսի ԺԿ գլուխ)։

Երևի հէնց այդ լեգէնդայի հիման վրայ է, որ մեր եկեղեցին համարում է բոշաներին անիճւած ցեղ և երբէք նրանցից կրօնաւոր չէ ընդունում ձեռնադրելու, չնայելով նրանց ջերմեռանդ հաւատքին *)։

Մի ուրիշ լեգէնդա, որ հաղորդում է Ք. Պատկանեանը, վերաբերում է բոշաների «մաղտգործ» կոչուելուն։ «Առաքեալներից մէկը Քրիստոսի հետ ճաշելու ժամանակ, տալիս է նրան մի կտոր հաց, որի մէջ Քրիստոսը տեսնում է կեղտեր. բարկանում է և մի փունջ մազ գլխիցը պոկելով պարզում է առաքեալին։ Սա զարմացած նայում է վարպետին, այդ ժամանակ Քրիստոս խաչակնքում է մազի վրայ և աշակերտը իսկոյն սովորում է և սկսում մաղ գործել (երևի որ այնուհետև մաքուր հաց ներկայացնէր)։ Եւ ահա այդ աշակերտի ցեղիցն են բոշաները» **): Ըստ Պասպատիի սակայն, բոշաները Հայաստանում, ասում են որ «Յոբն է սովորեցրել իրենց նախնիքներին՝ մաղ և կողով գործել և միշտ դրանով ապրել» ***):

Աւելորդ չեմ համարում յիշատակել նաև, որ մի վենետիկեան, Ն. Վ. Սարգսեանը, իր Թոնդրակեցոց մասին մի

*) Գ. եպ. Սրուանձտեան «Թորոս աղբար» հ. ա. եր. 26—27, այլ և Ն. Վ. Սարգսեանի «Տեղեկագիր ՚ի փոքր և ՚ի մեծ Հայտ», եր. 81—82։

**) ПАТКАНОВЪ. «Цыганы» եր. 69—76։ Պ. Ե. Լալաբեանն ևս նույն լեգէնդան պատմում է «Ազգ. Հանդէսում» (դ. ա. եր. 179)։

***) Paspatis. «Etudes sur les tchinghanés». եր. 17։

գրուածքում (Բազմավէպ, 1893, №№ 1, 3 և այլն) ենթադրում է, թէ բոշաները թոնդրակեցոց մնացորդներն են: Ինչպէս այդ ենթադրութիւնը, նույնպէս և բոշաների մասին մի այլ հայ գրող պ. Գ. Վանցեանի կարծիքը, թէ նրանք մեր պատմութեան մէջ յիշատակուող արևորդիների ցեղիցն են՝ զուրկ են հիմունքներից և ոչ մի համոզեցուցիչ փաստ չեն ներկայացնում:

Հայ-բոշաները ամէն կողմից զննելով, բոլորովին նման են եւրոպական և այլ երկրների մէջ թափառող գնչուներին, նրանց մի մօտաւոր ցեղն են կազմում և նրանցից են բաժանուել ու Հայաստան մտել: Հետեւապէս նրանք էլ հնդկական ծագումն ունին և հաւանականօրէն Ջաթ ցեղից սերում:

Բ. Թ Ի Ի Ը.

Հայաստանի գրեթէ ամէն կողմերում կարելի է հանգիստել հայ-բոշաների: Նրանք ցրուած, բնակութիւններ են հաստատել կամ աւելի ճիշտն ասել, միջավայր են ընտրել այն նահանգները, որոնց մէջ հայ ազգաբնակութիւնը աւելի շատ է. բացառութիւնը կազմում է միայն Վասպուրականի նահանգը, ուր շատ քիչ կան նրանցից: Մեծ մասամբ նրանք ապրում են Սեբաստիայի (Սվազ) նահանգում, ուր Վեզիր-Քէօփրուից մինչև Քաստամունի տարածուելով, կենդրոն են ընտրել Բոյբաթը: Այդ աւանում աւելի քան 6000 բոշաներ կան, չհաշուելով շրջակայ գիւղերը: Մարգուանում հաշուում են 481 տուն և եթէ ամէն տան վրայ համարենք 6—7 անձ *) կը լինի մօտ 3000 բոշա: Վեզիր-Քէօփրուի մէջ՝ 280 տ. Զիլէ՝ 93 տ. Բաֆրա՝ 290 տ.: Յետոյ, Էրզրումի վիլայէթում, թէ Էրզրումի իրեն մէջ և թէ Բասէնի գիւղերում կան մօտ 300 տուն (Ալշաքրաք, Թորթան, Հասան-

*) Բոշայի իւրաքանչիւր ընտանիքը բաղմամարդ է. բոշա կանաչք չատ են ծնում, բացի դրանից սակաւ չէ, որ եղբայրները միասին են ապրում:

ղալէ, Հերթե և այլն): Կան նաև բոշաներ Ակնում, Մար-
գուանում և Փոքր-Ասիայի զանազան կողմերում:

Կովկասում թէ 1828 ին և թէ նրանից առաջ գաղթած
կամ հէնց սկզբից եղած հայ-բոշաների հետքեր երևում են
Կարսում, Երևանում, Ալէքսանդրապոլ, Ախալքալաք, Օլթի,
Լոռի, Շամախի և նոյն իսկ Թիֆլիս: Ըստ Շոպէնի, Երևա-
նի Կոնդ թաղում կան 46 տուն. սրանք մինչև այժմ են-
թարկուելով շրջապատող ազգի ազդեցութեան, գրեթէ թո-
ղել են թափառական կեանքը, մաղազործութիւնը և հաս-
տատուն կեանք վարելով, ունին սեփական տուն և այգի.
կան նոյն իսկ հարուստներ նրանց մէջ և որպէս ասել են
ինձ, մի յայտնի ընտանիքի—Մելիք-Աղամալեանների նահա-
պետ Մելիք-Սահակը եղել է բոշաների իշխանը (ահիլ): Կար-
սում հաշուում են 20 տ. Կարսի Զայիմ գիւղում (բոշա-Զա-
յիմի) 20 տ. Ախալքալաք՝ 31 տ. Ախալցխա՝ 16 տ. Օլթի և
շրջակայք՝ 17 տ. Բորչալու (Ծալկա՝ 20 տ. Լոռի՝ 5 տ.) և
Ալէքսանդրապոլ ու շրջակայք՝ 50 տուն *):

Գ. ԹԱՓԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Ճիշտ ստատիստիքական թուեր ունենալ անհնար է.
բոշան մի տեղ չի հաստատւում. այսօր կամ այս ձմեռ այս-
տեղ է. իսկ վաղը կամ միւս ձմեռ մի ուրիշ գիւղում, ուրիշ
շրջանակում: Զմեռն է միայն, որ նրանք տեղաւորւում են
մի տեղ և սպասում գարնան, վարձելով մի խրճիթ գիւղա-
ցուց կամ քաղաքացուց: Ամբողջ ձմեռը նրանք զբաղւում են
մաղ. քթոց, սէլէ, կողով, խոզանակ և այլ այդպիսի բաներ
շինելով և երբ գարունը բացւում է, բացւում են ճանա-
պարհները, իսկոյն բոշա կանայք բռնաւորուած իրենց ապ-

*) Այս թուերը վերցրած են Патканов-ի «Цыганы», «Ազգ.
Հանդէս»-ի (գ. ա.), Գ. եսլ. Սրուանձտեանի «Թորոս աղբար» և այլ
գրքերից:

րանքներով, լցում են քաղաքներում և շրջակայ գիւղերում՝ ծախելու, մուրալու և ամէն տեսակ պարէն հաւաքելու: Բոշա կինն է, որ վարում է առևտրական մասը. ձգում է մէջքին մի կաշուէ պարկ, վրան ամրացնում մի երկու սակառ, ձախ թևից քաշ անում միքանի մաղ, թէշիկը (աղէկաթ) կամ գուլպան խրում է գօտու մէջ և հաստ ու երկար ցուպն առած՝ այս-այն տունն է մտնում մաղը ծախելու և կամ պարէնի հետ փոխելու, մուրալու մի այնպիսի պնդերեսութեամբ, որ անտանելի է: Մտնելով մի տուն, նա ցուպի հարուածներով կամ տրագ ճոճումներով իրենից պատկառելի հեռաւորութեան վրայ է պահում յարձակուող շներին, ապա տանտիկնոջ առաջարկում է գնել մի բան և իսկոյն սկսում է գովասանել նախ իւր ապրանքը, ապա տանտիկնոջ գեղեցկութիւնը, բարութիւնը, աչքերը, ունքերը... Ծախէ մի բան կամ ոչ, նա սկսում է մուրալ, նախ մի կտոր հաց և երբ ստացաւ՝ մի կտոր պանիր, յետոյ մի հին շոր^{*}): Այնքան տրագ, ճարպիկ և գրաւիչ կերպով խօսում է նա, այնքան հոտառութեամբ գուշակում է, թէ ինչ բան կարող է գիւթել գնողին, այնքան սրախօս է, հաճոյացող, որ առանց մի բան առնելու՝ տնից դուրս չէ գնում: Ամբողջ օրը, երբեմն շաբաթներ անցկացնելուց յետոյ դրսում, ո՛չ մի բայէ պարտաւ չէ մնում, այլ քայլելիս իսկ կամ գուլպա է գործում կամ բուրդ մանում: Արագ քայլերով նա վերադառնում է տուն և ամբողջ վաստակը յանձնում է ամուսնուն: Մայիսի 15-ին բոշա կինը դուրս է ընկնում տնից, վերադառնում է յունիսին և ապա նորից գնում է ցորենի, լոբու, դասի և երբ բաւական հաւաքել է, մի երրորդ անգամը՝ չիբի, թուրթի և ալլն: Ո՛չ մի բան նա չի արհամարհում. ամէն բան վերցնում է, ամէն բանի հետ նա փոխում է իր մաղը, քթոցը և միշտ յօգուտ իրեն աւելի վերցնելով: Եթէ իր ընտելութիւնը մօտ չէ և կամ գիւղերումն է, իւրաքան-

^{*}) Տես ալլ մասին նաև «Ալլ. Հանդէս» գիրք ա. ձանկեանի «Ակնայ հնութիւնք» և ալլն:

չիւր բոշա ամէն գիւղում ունի իր հայ բարեկամը, լաւ ծանօթը, որի տան մէջ է կուտակում ժողովածը, անշուշտ մի վարձ տալով տանտիրոջ. ապա՝ երբ բաւական ժողովել է, իմաց է տալիս իր ամուսնուն կամ իր տան տղամարդին և սրանք էջերով գիւղերն են իջնում և ամբարած պաշարները իրենց բնակարանը տանում:

Հովտեմբերի վերջերին սկսում է դադարել թափառականութիւնը. բոշայի տունը այժմ լի է ցորենով, ալիւրով, իւղով և ամէն տեսակի պաշարով: Այժմ հերթը եկել է տղամարդկանց, որոնք էջերի հետ գնում են շրջակայքը, երբեմն հեռաւոր տեղեր՝ բերելու համար ուռենու ճիւղ, մաղի համար մազ. ապա ընկերովի նստում են ճիւղերը մաքրում և բաժանում միմեանց մէջ և այնուհետև սկսում է ձմեռուայ գործունէութիւնը—գործել ամէն բան և պատրաստել լետազայ գարնան համար:

Թափառելու համար ամէն բոշա կին չէ գնում. նորահարսները մինչև 5 տարի տանն են մնում և խնամում են մանուկներին ու կերակուր պատրաստում. իսկ միւսները, երբ բոլորովին դեռ չեն գառամել, երկու-երկու ընկերացած ընկնում են ամէն կողմ և եթէ բաւական բան ժողովել են և տարածները սպառել, վերադառնում են՝ նորից գնալու համար:

Տնից տուն և գիւղից գիւղ կտրում են նրանք անխոնջ, կիզիչ արևի տակ, յաճախ իրենց ծծկեր մանուկները կոխած էջի վրայից կախուած պալուսակի մէջ և կամ եթէ մէկն է՝ մէջքին կապած. գիշերում են գիւղերում իրենց բարեկամների տան մէջ: Քաղաքի 'ւ գիւղի փողոցներում հայ մանուկները ընկնում են նրանց ետևից, երբեմն կոմիսում են՝ որ իրենց դռնակները սրանայ *), յաճախ սուր խօսքեր նետում դէպի նրանց. բայց բոշա կինը անդրդուելի է. սուր խօսքերին՝ աւելի սուր և ոչ սակաւ լիտի կալամբուրներով է պատասխանում. պէտք եղած ժամանակ այնքան սրտառու

*) Ազգ. Հանգէս» գիրք ա.


թեամբ և ճարպիկութեամբ ցուպն է ճոճում, որ ետևից արնդողները փախչում են և սակայն, այս բոլորով հանդերձ, բոշա կնոջ պէս բարոյականի տէր կին հազուագիւտ է: Նա գիտէ լկտի խօսքեր շարտել, հայհոյել կեղտոտ խօսքերով, բայց վաչ նրան ով կամենայ նրա պատուին դիպչել. նա առիւծ է կտրում և կը մեռնի, միայն իր օջախին, իր ամուսնական հաւատարմութեան մի բիծ անգամ չի դնիլ: Եւ այս վկայում են ոչ միայն հայերը, այլ և Եւրոպացի ուսումնասիրողները *):

Այս բոլորից երևում է, որ հայ-բոշաների մեծ մասը կէս նստական կեանք է վարում և միայն տարուայ 6—8 ամիսն է, որ թափառում է: Բայց իսկական թափառական բոշաներ էլ կան, որոնք ոչ մի տեղ չեն հաստատւում մի քանի տարի: Դրանցից շատ կարելի է հանդիպել Փոքր-Ասիայում—մեծ ճանապարհների, գետերի և ջրերի կողքին երբեմն վրանով և երբեմն ծառերի ստուերների տակ: Նրանք ոտնատակ են տալիս ամբողջ երկիրը. որտեղ աւելի որս կայ, մնում են եղածի չափ, յետոյ մի օր հաւաքում, բառնում են էջերի վրայ և հեռանում մի ուրիշ շրջան շահագործելու: Այս տեսակ բոշաների մէջ է ահա, որ մնացել է ինքնատիպութիւնը, չնայելով որ նրանք քրիստոնեայ են նոյնպէս և վաղուց է, որ այլ ևս չեն զբաղւում չինգէնէների պէս գուշակելով կամ պարելով: Սրանք էլ մաղ, կողով և այլն են գործում և տղամարդկանց մէջ կան, որոնք երաժիշտներ են գիւղական հարսանիքների համար, պայտառներ, անասնաբույժներ և երբեմն դարբիններ: Այս տեսակ բոշան ունի իր տարազը, որ միշտ բաղկացած է հին լայն շորերից: Այս բոշան նոր շոր չի սիրում և բոշաների համար հազուապատ պատրաստողները շատ անգամ ստիպուած են լինում նախօրօք հագնել-հնացնել, որպէսզի ծախուի: Այդ հազուապատ մի լայն և կարճ բաճկոն է վերից, լայն ու տակը

* Եւրոպական պատմագիրներից Բօրրօու և Յիպպէլը խոստովանում են, որ գնչուհուց աւելի մաքուր և հաւատարիմ կին չէ կարող լինել (տես Паткановъ. «Дыганы»):

կարճ շալվար, մի կարմիր գօտի, մի տափակ կոշիկ, ձմեռն էլ մի աբա և ահա բոլորը: Կովկասում բոշաները հագնում են տեղական գիւղացոց տարազով և գլխին դնում են փափախ կամ ռուսական գլխարկ, իսկ Փոքր-Ասիայի այդ բոշաները կրում են մի հին ֆէս, շուրջը հնամաշ եազմա փաթաթած:

Թափառելու ժամանակ բոշաները բացի այն, որ տեղական բոլոր լեզուները գիտենալով՝ կարողանում են ճանապարհները հարցնել, ունին և նշաններ, որոնցով իմանում են թէ որ ճանապարհով գնալը աւելի օգտակար է, որտեղ ընդունելու թիւն կը գտնեն և որտեղ ոչ: Այդ նշաններից մի քանիսը մենք տուել ենք այս գործի ներածութեան մէջ: Այդպիսի նշաններ շատ կան և գծում են ծառերի կեղևների և ժայռերի վրայ: Վերջերս ինձ յայտնեցին նաև մի ուրիշ նշանի մասին, որի բացատրութիւնը անկարելի եղաւ գտնել: Բոշաները այնքան զգուշութեամբ պահում են նշանների գաղտնիքը, որ շատ անգամ ուրանում են նրանց գոյութիւնը: Այդ նոր նշանը այսպէս է



բացի դրանցից, բոշաներն էլ գնչուների պէս տոպոգրաֆիական մեծ ընդունակութիւն ունին. մի անգամ անցած ճանապարհը նրանք այլ ևս չեն մոռանում: Յիշողութեան սրութիւնը զարմանալի կատարեալ է:

Եթէ թափառելու ժամանակ բոշա կինը տղայ է ծնում, ամենայն պարզութեամբ լուանում են հանդիպած ջրում, փաթաթում շորի մէջ, դնում մէջքի վրայ կամ էջի կախուած պայուսակի մի աչքում և շարունակում են ճանապարհը մինչև մի գիւղ հասնել և մկրտելը: Եթէ մէկը մեռնում է և գիւղը մօտ է, կապում են էջի վրայ և գիւղ տանում. եթէ ոչ՝ լուրթեամբ թաղում են առանց ունի ծէսի և անցնում:

Այս թափառականութեան և տուհասարակ ամէն հան-

գամանքում, բոշալի միակ ընկեր անասունը էշն է: Նա սիրում է իր էշին որդու պէս և խնամում է նրան մեծ հոգատարութեամբ: Իր նստած խրճիթի տաքուկ անկիւնը էշինն է, երբէք չէ ծեծում նրան և չի լողնեցնում. տեսնելով որ «էշ» բառը բաւական նախատական բառ է հայերի մէջ, նա ալդ բառը չէ գործածում հայերէն խօսելիս էշի վերաբերութեամբ, այլ ասում է «մեր մալը, մեր տաւարը»: Էշին այնքան են սիրում, որ տան անգամներից մէկի հիւանդանալը կամ մեռնիլը այնքան ցաւ չէ պատճառում, որքան էշինը: Էշի վրայ լսել եմ նայն իսկ երգեր, որոնցից մէկի երկու տողը միայն հնարաւոր է լիշտտակել, որովհետև միւս տողերը լիքն են անվայել բառերով: Ահա ալդ տողերը.

Ուռու դասնող (մաղի շրջանակ) բառնայի, աման էլ.

Պարտիզու (մի տեղ է) ձորէն վեր հանէի, աման էլ...

Պատմում են իրենք, որ մի օր որձ էշը, որին իրենք լէլէ են ասում, այնպէս հիւանդանում է, որ չեն կարողանում բժշկել և իբր վերջին միջոց՝ կանչում են հալ քահանային՝ որ վրան աւետարան կարդալ: Բայց քահանան անշուշտ չէր անիլ. դրա համար էլ պառկած էշի վրայ մի մեծ շոր են ծածկում և քահանան մարդ կարծելով՝ կարգում է *):

Երբ կամենում են մէկին խիստ անիծել, մինչև իսկ ասում են. «Իմանաս սէլի զոռոց, չիմանաս էշի զոզոռոց. հօ-հօ անես (այսինքն կովարած դառնաս), չու-չու չ'անես)...



*) Այս պատմութիւնը պատմել են ինձ բոշաները Սիշտաակում է նրան նա, պ. Ն. Վալայիանը («Ազգ. Հանդէս» զ/ր. ք ա. :

Դ. ՅԱՐՍԲԵՐՈՒԹԻՒՆ ԴՐՍՑԻ ՍԶԳԵՐԻ ՀԵՏ.

Թէ թափառական կեանք վարելը, թէ բոշալի աներեսութիւնը, սրախօսութիւնը և այլն, զանազան ասացուածքների տեղիք է տուել նրանց շրջապատող ազգերին: Հայ ժողովուրդը բոշալին համարում է անամօթ ստող, լաճախ գող. թէև բոշա կինը երբեք գողանալ չգիտէ, բայց բոշա տղամարդը առիթը չէ փախցնում: Զանազան առածներ են ստեղծուել, որոնցից իւրաքանչիւրը բոշալի մի-մի բնաւորութիւնն է արտայայտում: «Բոշի պէս գզգզուած մազերով, բոշի պէս աներես», «բոշի պէս խօսքը ջիբն է» (սրախօս), «բոշի թագաւոր է դառել» (ակնարկութիւն նրանց փեսաների թոնիր մտնելուն. տես «ամուսնութեան» մէջ), «բոշան փաշա չի դառնար». «բոշից քահանայ չի լինիլ» (տես ծագման լեզբնդան: Այդ և այդպիսի նախատակաւ բառերով ու առածներով հայ ժողովուրդը արտայայտում է հայ-բոշալի յատկանիշը կամ նրանցով ծաղրում է իրենց — բոշաներին:

Ինքը բոշան հայ ժողովրդի հետ միշտ աշխատում է լաւ վարուել, աւելի լաւ շահագործելու համար նրանց. ունի բարեկամներ գիւղերում և քաղաքներում, որոնց հետ աշխատում է ու է ազգակցական կապ ունենալ և սակայն քաւոր-ից աւելի հեռու չէ գնում: Մինչև այսօր էլ նա խոստովում է հայերից աղջիկ առնելուց և հագիւ ուրեմն պատահել է, որ նրանց աղջիկ տալ: Ոչ-բոշաներին նա կրնաքել է զանազան անուաններով. հային նա կոչում է գաշուտ *)

*) Եւրոպական ցիղանները օտարներին անուանում են դաձօ, լոգնակի՝ դաձէ, որ նշանակում է գիւղացի կամ վաճառական և շատ նման է գաշուտ բառին:

(գիւղացի կամ վաճառական), երբեմն էլ կլլալալ (երկրագործ). թուրքին՝ ասում է ալալ (անօրէն), իսկ ռուսներին՝ սիսօրով (մեծագլուխ): Պահպանելով այդքան հեռաւորութիւն հայերից, նրանք իրենց շահագործական շրջանները սահմանափակում են միշտ հայ ազգաբնակութեան մէջ և ձմեռն էլ բնակտրաններ ընտրում նրանց գիւղերում կամ քաղաքների մէջ՝ նրանց թաղերում: Բացի դրանից, դաւանում են նրանց կրօնը և նրանց բարքերից շատերն, էլ իրենց մէջ գործածական դարձրել:

